ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«25» 01 2022թ.
№ ԿԵՌՖ2-110

«Արշավիր Ավտո» ՍՊԸ (ՀՎՀՀ 00487455) տնօրեն
Գ. Բրուտյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան,Նոր Արեշ 15Փ/7/12
էլ. հասցե՝ arshaviravto@mail.ru; info@eltender.am
հեռ. +374 93 601909

ՀՀ պաշտպանության նախարարության և «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/12-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ. պետք է մատակարարեր՝ 20 հատ Գործարկիչ, 80 հատ Արգելակման կոճղակների մակադրակ, 100 հատ Կարդանային լիսեռի խաչուկ և 20 հատ Կցորդման սկավառակ սեղմվող, զամբյուղ, սակայն չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 19 869 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 13 246 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 264 920 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 397 380 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am